

ՍՏԵՓԱՆՍ ՕՐԲԵԼՅԱՆԸ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵԶԱՌԵՑԻՆ ՈՐՊԵՍ ԸՆԿԵՐ ՈՒ ՀԱՄԱԽՈՀ (Երկու բանաստեղծների «Ողբ»-երի հոգևոր աղերսները)

Խոշոր մշակութային գործիչների գաղափարական համագործակցության արդյունքում է ծնվել Ստեփանոսի «Ողբ ի Ս. Կաթողիկէն», որը հորինված է ժանրին բնորոշ յուրահատկություններով, կրում է Մ. Խորենացու և Ն. Շնորհալու ողբերի բարերար ազդեցությունը: Դիմառնական ոճը բանաստեղծը լրացնում է նոր տարրերով. Կաթողիկէն հանդես է գալիս իբրև Հայկի զարմի արքայուհի, որ մերկ ու փառազուրկ իր մոտ է կանչում որդիներին՝ իր սգի ու թշվառության մասին հայտնելու: Ցավալի անկումի պատճառը թուրքական արյունալի լուծն է: Իր զավակները պիտի փոխեն այս անարգ վիճակը, ինսամեն իրեն որպես ծեր ծնողի և վերականգնեն կործանված թագավորությունը:

Բանալի բառեր՝ Ստեփանոս Օրբելյան, Խաչատուր Կեչառեցի, ողբ, պատմիչ, վարդապետ:

Մեծ արվեստագետների ստեղծագործական համագործակցությունը բոլոր ժամանակներում արդյունավորվել է գեղարվեստական հրաշալի հղացումներով: Այս երկուսը ևս ձգտել են աջակցել իրար, պատասխանել միմյանց հոգևոր երկունքով՝ որպես առհավատյա սիրո ու հավատարմության: Խաչատուրը 1295 թ. արդեն հորինել էր «Ողբ վասն արեւմտեան տանս արեւելեան» ստեղծագործությունը¹, իսկ Ստեփանոսին էլ 1299 թ. հորդորել է ձեռնարկել «Ողբ ի դիմաց Կաթողիկէին» երկի գրությունը: Ստեղծագործություններ, որոնք երկրի վատթարացած քաղաքական ու սոցիալական վիճակի **պատմագեղարվեստական ու ազգային-քաղաքական** արտահայտությունը եղան²: Այդ ցավալի ավերի ու ավարի առիթով իր ըմբոստ ծայնն է բարձրացնում և հանճարեղ Ֆրիկը՝ դարի մյուս արժանավոր զավակը՝ աղաղակելով /Այլ կամք ի ձեռս անօրինի, /Որ կու վարեն անգին գերի³:

Կեչառեցու «Ողբ վասն արեւմտեան տանս Արեւելեան» երկը թեմատիկ ու գաղափարական առումով դարձյալ հայ ժողովրդի հերթական ասպատակությունների ու թալանի ենթարկվելու մասին է: 1295 թ. Ղազան ղանի իշխանության սկզբում նրա զորահրամանատար Նավրուզն սկսում է խիստ հալածանք հայկական եկեղեցու և հայ բնակչության դեմ: Հայ ժողովուրդը կրկին լքվածության սոցիալ-հոգեբանական մի հերթական ցնցում է ապրում: Վիճակը շտկվում է միայն Կիլիկիայի հայոց արքա Հեթումի ազդու միջամտությունից հետո⁴: Այս ամենում ցավալի հանգամանքներից մեկն էլ հայ իշխանական դա-

1 **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. Ա. Դյուլխանյանի), Ե., Սովետական գրող, 1988, էջ 17-20:

2 Ժանրի ընդհանուր բնութագիրը՝ Տե՛ս **Ջրբաշյան Ե., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Ե., Լույս հր., 1980, էջ 227-228: **Միջնադարյան չափածո ժանրերի մասին՝** Տե՛ս **Հայ միջնադարյան գրական ժանրեր (Ժողովածու)**, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի ան. ինս., Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1984:

3 **Ֆրիկ**, Բան ի Ֆրիկ գրքոյն, Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1-ին, Ե., 1971, էջ 105:

4 **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, էջ 272:

սի կորուստն է, որի սխրանքների շնորհիվ է նաև մեր ժողովուրդը հասել իր երազների **վի** մասի իրականացմանը: Փաստ է, որ նվաճողներն ամենից առաջ այս դասն են վերացրել, որպեսզի հեշտությամբ տիրեն երկրին.

**Յայս ահագին աւուրս որ հասաք,
Ժամանակիս, որ պատահեցաք,**

Չքաղցր արարիչըն դառնացուցաք,
Չերկիրս արեամբ մեղօք ներկեցաք:
Չմայրն աստուծոյ մեր տրտմեցուցաք...
Չեկեղեցեաց դրունս փակեցաք,
Չկանոնական գիրըն մոռացաք...
Մեք մեր ձեռօք մեզ դահիճ եղաք.
...Այլ չար գործովք մեր պատառեցաք...
Ի պատարագն անգամ չնայեցաք...
Հագարացոց ազգէն գերեցաք,
Յանօրինաց ձեռն մատնեցաք,
Արենարբու զօրաց նեղեցաք`
Ճաղաթայից սըրէն խոցեցաք...¹

Օրն ու դարը, որոնց հանդիպել է քնարական հերոսը, լի են չարիքներով: Իսկ չարիքն արդյունք է մեղքի: Ուստի կատարվածը բանաստեղծի բանաձևումով սա է` **/Խիստ արժանի եղաք` զինչ եղաք:** (Այսինքն` արժանի եղանք նրան, ինչին արժանի էինք, այն է` չարքաշ կյանքի): Դա իր ժամանակի ամենատարածված մտայնության դրսևորումն է, որով Խաչատուրը հայրենիքի ծանր վիճակը գործած մեղքի արդյունք է համարում: Ըստ Մ. Աբեղյանի` «Ողբը» կազմված է երկու մասից»², ու երկու մասերն էլ, ըստ նրա, արվեստի տեսակետից թույլ են (այս մասին կխոսվի ստորև): Գիտնականը բարձր է գնահատում երկի պատմական բովանդակությունը` նկատի ունենալով խնդիրների հրատապությունը: Եթե առաջին մասում բանաստեղծը մեղքի քննություն է կատարում, ապա երկրորդ մասում «նա ջերմորեն է խոսում մոնղոլների դեմ ապստամբած Նախարարների և այդ պատճառով դաժանորեն գլխատված Դեմետրե թագավորի մասին: Բանաստեղծի իդեալը Պռոշ իշխանն էր իր որդիներով, որոնց հետ էլ կարելի էր կապել հայրենի երկրի փրկությունը»,`-նշում է Ա. Դյուլխանյանը³: Շարունակությունն աչքի է ընկնում հայոց բազում ընտիր և հզոր իշխանների Նահատակության մասին բանաստեղծական հուզիչ տողերով, որոնցում փառաբանվում է նրանց քաջությունն ու գործած սխրանքը.

Մեռան իշխանքն մեր ցանկալի
Եւ իւրեանց որդիքն ի տղայ հասակի...
Սադո՛ւն, սիրած մեծ Ապաղանի,
Գոված ընտիր յամէն հանդիսի,
Չաչերդ բա՛ց, զինչ Դամասկոսի,
Տե՛ս ըզգաւառս ի յերերմանի...
Չպարոն Պռօշըն զարդ հեծելի,
Որ զերկաթի գուռն առներ փոշի,

1 **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. Ա. Դյուլխանյանի), էջ 17-20:

2 **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1970, էջ 271:

3 **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. Ա. Դյուլխանյանի), էջ 13:

Աջու բագունկ էր Նոր Սիոնի.
Հիմն հաստատ հայոց հաւատի:
Կամ գիւր որդիքն գարմանալի
ՉՄկղէմ, գՎասակ գկորիւն առիւծի (Էջ 19):

Գովում է Սադունի գեղեցիկ աչքերը, որ բացվելու դեպքում կորսված գավառներ միայն կտեսնեն: Պռոշը, Ամիր-Հասանը, Տարսայիճը և ուրիշներ, որ նկարագրված են պայքարի ու հերոսական գործողությունների մեջ, չեն խնայում ոչինչ հանուն հայրենյաց: Բայց անհավասար կռիվներում գործած հերոսությունը միայն ցավն է ավելացնում, քանզի կորուստն անհամեմատ մեծ է, իսկ ձեռքբերումներն աննշան են դրանց համեմատ.

Աւա՛ր, թէ զո՞րն ասեմ ի լալի,
Չայն հին ու Նորքն ի գերեզմանի....(Էջ 20)

Թեև երբևէ չի պակասել հայ բազկի թափն արաբների ու թուրքաթաթարական հորդաների դեմ, սակայն չկան այլևս այս քաջերը. նրանք գերեզմանում են: Ապրողներին մնում է ողբալ. «Վա՛յ գմնացորդքս՝ սուտ կենդանի» (Էջ 20)¹: Կեչառեցին ցանկանում է, որ Աստվածամայրը միջնորդ լինի Տիրոջ առջև, որ Ստեփաննոսի ձեռամբ տրվող հիշատակի տոնը հանուն հայոց քաջերի հասնի երկինք: Թող Աստծուց փրկություն լինի իր ազգին, որ հազարացոց լծից հնարավոր լինի ազատել հայոց ազգի անխախտ թագն ու հայրապետական Աթոռը: Երևում է, որ հաճախ թաթարը և հազարացին իբրև ընդհանուր թշնամի են ընկալվում այս արվեստագետների կողմից:

Այդ դժնյա ժամանակներում ավերվել էր Արևելյան Հայաստանը, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին անշքացել էր, կիսափուլ վիճակում էր Ս. Էջմիածինը՝ ուղիղ ու փոխաբերական իմաստով: Այս տխուր առիթով, Խաչատուրի անմիջական հորդորով, բանաստեղծական իր խորը ցավն ու վրդովմունքն է արտահայտում Նաև Ստ. Օրբելյանը.

Ձայն բարձրագուժ ու ահագին
Նման օդոցդ որոտացին.
Կանչին ահեղ և սաստկագին
Գայ ի դաշտեդ Արարատին
Լնու աշխարհս բոլորովին
Չորեքծագեան տիեզերին.
Բախե զականջս ադամածին
Բոլոր ազանցս մարդկային²:

Ն. Շնորհալու պես դիմելով դիմառնական ոճին՝ բանաստեղծը Էջմիածնի Կաթողիկե Եկեղեցին ներկայացնում է որպես հալածված ու փառազրկված արքայուհի: Քնարական հերոսի ողբի ու կականի հետ այդ մահածին ձայնին ականջալուր՝ բազմությունը հորդում է դեպի Արշակունի Վաղարշի պարսպապատած Նոր քաղաքը: Այն, ինչ տեսնում են Արամյան տուն շտապողները,

¹ Նյութի վերլուծությունը տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, էջ 271-273:

² (Ստ. Օրբելյան, Ողբ ի Ս. Կաթողիկեն. Հրատ. և ծանոթ. Ա. Դոլուխանյանի) տե՛ս **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր, էջ 82. Ողբը՝ էջ 82-105: Ստ. Օրբելյանի մասին մատենագիտություն. տե՛ս **Պ. Խաչատրեան**, Հայ հին գրականուեան մատենագիտութիւն, Ե., 2016, էջ 496-500: Օրբելյանի Ողբը նախկինում ունեցել է երեք հրատարակություն՝ 1790 թ. Նոր Նախիջևանում, 1846 թ. Կալկաթայում և 1885թ. Թիֆլիսում: Այսուհետև՝ էջը կնշվի տեքստում:

տրտմության ու ցավի է արժանի: Հայկի զարմի լույսի աղբյուրը, Երկնային թագավորի փառքի խորանը նսեմացված է.

**Մերկ, խայտառակ ի բարթոնին¹
Չանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերքն ճողեալ որպէս կնտին,
Ստինքն ցամաք զերդ ըսկնդկին,
Չկուրծքն բախեր քարամբ ուժգին.
Առուք արեանց իջանէին (Էջ 84):**

Պատկերված այս ծանր տեսարաններին մեկից ավելի անգամներ հետևում են հռետորական հարցումներ, թե ուր են հարսի փեսաները, ազատները, զորքերը, որ չկանխեցին այս անարգանքը: Բայց տվյալ դրվագում նախնառաջ տրվում է ողբի ու կոծի այն սգահանդեսը, որ կատարել են հայերը ննջեցյալների թաղման ժամանակ²: Հատկապես ուշագրավ է դրվագն այնու, որ մեծապես հիշեցնում է Գրիգոր Մագիստրոսի՝ իր հորեղբայր Վահրամ Պահլավունի սպարապետի սգո հանդեսի նկարագրությունը տալիս³. այսպես.

**Մոխիր կուտեր նման բլրին,
Ցաներ ձեռամբն ի գագաթին.
Երամք կանանց ճշող ջայլից
Շուրջանակի զնա պարէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Չդամբանական փողս ածէին,
Աւաղական ողբովք լային,
Չգալարափողն հնչէին,
Կեսքն շիւան մեծ քաշէին,
Կեսքն զվարսիցն փետէին....(Էջ 84)**

Սա մի շատ ուշագրավ դրվագ է դամբանական (գերեզմանական) կոչված ծեսի մասին: Դեռևս նախաքրիստոնեական շրջանից մինչև 19-րդ դարավերջ ողբերգերն ուղեկցվել են ջայլող լալկան կանանց ու տղամարդկանց կոծապարերով (դամբանականներով) և սգերգով⁴: Դրանք ըստ մեծ պարագետ Սրբուհի Լիսիցիանի հետագայում անցել են գաղտնի ծեսերի շարքը (թերևս արգելվելու պատճառով)⁵: Դրվագում շատ պարզ նկարագրված է երաժշտությանը ուղեկցող պարը, երբ հերոսուհին մոխիր է ցանում իր գլխին որպես սգակիր ողբասաց, իսկ ջայլող կանայք պարում են շուրջանակի, և երգասցացներն ու փողահարները մի փոքր հեռվում կանգնած լացուկոծով, դեմքերի արտահայտությամբ, շարժումներով, վայ ու կոծով արտահայտում են ընդհանուր վիշտը:// հետաքրքիր էր էս պահը/// Սգացողներն ականա հարցնում են, թե որտեղից է գալիս ամպի նման հնչող ձայնը: Ո՞վ է արդյոք բազմոցի վրա, որ նմանվում է

1 **Բարթոն** բառը թարգմանվում է **բազմոց**:

2 Տե՛ս **Խաչատրյան Պ.**, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԵ դդ.), Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1969, էջ 7-11:

3 Տե՛ս **Մխիթարյան Ս.**, Սգո պարերը հայ միջնադարյան գրական և բանահյուսական մի քանի հուշարձաններում, Պար և երաժշտություն, Ե., Մուղնի, 2004, էջ 20-21: Նաև՝ **Գրիգոր Մագիստրոսի Թղթերը**, Ալեքանդրապոլ, 1910, էջ 41:

4 **Թումանյան Գար.**, Ուշբրոնզեդարյան թաղման ծեսերը Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելքում, Ատեն., Ե., 1997, էջ 111:

5 Տե՛ս **Лисициан С.**, Армянские старинные пляски, Ер., 1983, с. 69-122.

արքայուհուն: Եվ վերջապես այս ի՞նչ անտանելի սուգ է: Հարցումին տրվում է կոնկրետ պատասխան: Հերոսուհին պատասխանում է, որ ինքը «Էջը Միածին»-ն է՝ Կուսածին թագավորի իջավայրը: Նախապես ինքը հարսնացած էր Տիրոջ հետ Թորգոմածին աշխարհից: Իսկ այժմ վերածվել է ոսնակոխ եղած հրապարակի: Բանաստեղծը դիմում է խոսքի հակադրության զուգադրման. խոսքաշարը ձեռք է բերում կենդանի հաղորդակցական բնույթ, և երկխոսությունը առավել շարժուն է դարձնում ասելիքը.

Երբեմն արփի արևածին,
Այժմ խաւար անհնարին.
Երբեմն թագ կապեալ ձեռին
Անեղ բազկացն իմ Յիսուսին.
Այժմ անախտան նման աղբին՝
Եղեալ կոխան չորքոտանւոյն... (Էջ 85)

Իսկ իր շուրջ սգապար բռնածները՝ երկնային հարսնուհիներն են՝ «Եկեղեցիք Հայաստանին»: Հերոսուհին դիմում է և վերին գործին.

Չի գան ի վայրս իմ **յիստորին**¹,
Խառնին ընդ ազգքդ երկրածին,
Լսեն զգանգատս իմ դառնագին (86) և այլն:

Իր սուգը հասցնում է նաև երկինք, որ երկնայինները ևս «Ամբաւ վայիւք ինձ ախտակցին»: Թող լսեն իրեն երկնայինքը և վերին դասերը: Ինքը հզոր ու անպարտելի թագավորություն էր, որի տիրապետությունը Կասպից ծովից հասնում էր մինչև Գամիրք, Պոնտոսից մինչև Պարսք: Եվ այժմ էլ թող երկրածին ազգերը լսեն իր դառնագին գանգատը: Թող իմանան բոլորը, որ՝

Արեգակունք առ իս կային
Պայծառ եւ ահեղ քան զզգալին,
Շնորհն անմահ քահանային,
Պատիւն մեծ թագաւորին,
Փեսայն ճեմէր յառագաստին,
Հանգչեր ընդ իս միշտ յանկողին (Էջ 87):

Պայծառ օրեր է ունեցել, արժանացել պատիվների ու պաշտման, իմաստության գետեր են իրենից բխել: Առարկայորեն պատկերվում է հերոսուհու անձնական երջանկությունը որպես կնոջ ու հարսնուհու: Չի կարելի չնկատել երգերգոյան գեղեցիկ պատկերները, սիրո և վայելքի, հերոսուհու արտաքին գեղեցկության անկաշկանդ նկարագրությունները, որոնք առանձնակի արժեք են ձեռք բերում տվյալ համատեքստում: Հանկարծակի «դիպայ չարին, /Որ չէ եղեալ ազգդ մարդկային...»: Նախ կորցնում է Արշակ քաջից իր որդիներին, մխիթարվում Բագրատի որդիներով, բայց նրանք էլ անբուժելի վերքով վիրավորել են իր սիրտը: Թեև Շիրակա տան աթոռը հաստատեցին նաև Կարսում, տիրեցին Աղվանքին՝ հասնելով մինչև Ասորիք, և Աշոտից մինչև Գագիկ վերջինը տիրեցին աշխարհին, բայց կորցրին հայրական ժառանգությունը: Եվ ինքը հարցնում է, թե ուր են իր ավագ՝ Արշակունի որդին, որ մեռավ ծնողի գրկում, և կրտսեր՝ Բագրատունին, որ Դվինում փայտից կախվեց: Դժգոհ է, քանզի Հայկի զարմի շառավիղները հետին դարերում թույլ են գտնվել, ժառանգությունը չեն

¹ Բառը բացատրված չէ /երևի՝ **յիստորին**:

պահել: Դա թերևս դիտվում է իբրև ապաշնորհություն: Հիշում է և հայոց ազգի պատրիարքներին՝ Հովսեփից մինչև Գյուտ, մինչև Հովհաննես Գառնեցի, որոնք իրեն խնամում էին «որպես օրենս եր ծնողին»: Գալիս է հազարացի բռնավորի սրի տիրապետության շրջանը, երբ Արամյան տունը անիծյալ Յուսուֆի ձեռքով «ճեղքեալ յերկուս թագաւորին՝ Բագրատունեացն և Արծրունին», ինչը և երկատումով կորուստի լայն դուռ է բացում հայոց ազգի համար: Նրան, այդպիսով, հաջողվում է երկիրն անշքացնել, եկեղեցիները քանդել ու ամեն ինչ հողին հավասարեցնել: Մեջտեղ են գալիս և միջթագավորական ու միջավատատիրական բախումները, որի արդյունքում, բանաստեղծի պատկերավոր խոսքով՝ / Աթոռք բազումք անկանէին, /Տունք և ապարանք կործանէին....(90).

Իսկ սինլքոր Բագրատունին,
Թեպետ սակաւ ամօք կացին,
Այլ ջախջախեալ եղեգ էին,
Բեկեալ կենօք տատանէին....(92)

Այս արհավիրքներից հետո բնաշխարհիկ Հայաստան երկիրը գետնահար է եղել, սակայն հետագայում կիլիկյան գործիչները դեռևս չեն կարող մտածել Մեծ Հայքի թագավորության վերաշինության մասին, քանզի նրանք տարաշխարհում են ապրում ու հայրենիքի հոգսերին լավատեղյակ չեն: Մ. Աբեղյանը ճիշտ է նկատում, թե «Շնորհալին, թեպետ ողբում էր Հայաստանի քաղաքական իշխանության կործանումը, բայց չէր մտածում Հայոց աշխարհում հայկական թագավորություն վերականգնելու մասին: Իսկ Օրբեյանը 13-րդ դարի վերջում արտահայտիչ է բուն Հայաստանցիների իղձերի ու տենչերի»¹: Իսկապես այս շրջանի հայրենաբնակ մտածողները խնդիր են դնում Մայր երկրում Հայոց պետականության և թուլացած հայրապետական Աթոռի վերականգնման ու նորոգության²: Սա բոլորովին նոր մի մտայնություն է: Շատ դեպքերում նրանք օգտվում են բարեպատեհ առիթից, իսկ երբեմն էլ ստեղծում են նախադրյալներ դրա համար: Ահա թե ինչ է գրում բանաստեղծը.

Բայց միւս ևս այլ մէկ ջահ լուցին
Ի տան Բաղաց Սիսականին
Սմբատ սեպուհ քաջազարմին,
Ի հայկազանցն այն առաջին...
Թագաւորեալք թագ կապեցին
Ուժգին ու խրոխտք ընդդէմ չարին (էջ 94):

Ընդդեմ չարին կա մի ելք՝ վերակերտել հայոց վտանգված անկախությունը, ավերված հայրենիքը: Թեև **Բաղաց Սիսականներին** հաջողվել է այդ ջահը վառել, **Թագաւորեալք թագ կապեյ**, բայց Սիսական քաջերը ևս այդ ճանապարհին ստվերի պես անհետացել են, երազի վերածվել: Հայաստան աշխարհի գարունքն անցել է պատմության գիրկը: Բերված գեղեցիկ է պատկերը դա է հաստատում.

Որպես ծաղիկք յամարային,
Արևակեզ թարշամեցին,

1 Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Ե., ՀՍՍՀ ԳԱ իր., 1970, էջ 259:

2 Տե՛ս Գամջեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1886, էջ 292: Պետք է ասել, որ Մ. Գամջեանցը և այլք արևմուտքում առանձնակի չեն գնահատում այս գործիչների կատարածի կարևորությունը: Պատմաբանը որոշակի բացասական վերաբերմունք ունի պատմիչ Ստ. Օրբեյանի՝ որպես մտածողի և վարդապետի նկատմամբ:

Որպես սաղարթը վարսեալ ծառին՝
Խորշակահար ցամաքեցին:
...Միայն այրի գիս աստ թողին,
Որպես զոչինչ ի բաց լքին....(Էջ 95)

Մի անևկարագրելի ու դաժան աշունք է իջել մեր աշխարհի վրա: Դաշտի մեջ լքված ու այլակերպված հերոսուհին այս ու այն կողմ է նայում՝ ողորձագին ձայն արձակելով: Ի՞նչ կարող է անել այդ փափկասուն տիկինը՝ փառագուրկ ու թշվառ արքայուհին: Երևի թե ցավել ու փնտրել սիրելիներին: Բանաստեղծական խոսքում մի քանի հնարանքներին գումարվում է նաև հռետորական հարցումը, որը յուրատեսակ հակադրության ոճական ձև է ստանում: Այսպես.

**Ո՛ւր էք, որդի՛քդ իմ սրբածին,
Եկա՛յք առ մայրս ձեր նախկին,
Որպես օրենն է զաւակին,
Տանել խնամ ձեր ծնօղին** (Էջ 95):

Գործում է մտածողության նախկին արքեստիպը: Ինչպես նախնիների պաշտամունքը, այնպես էլ ծնողի սրբացումը պահանջում է խնամք տանել ծնողի հանդեպ: Բայց զավակները չկան, և փոխարենը թուրքական հոտերն են վխտում ամենուր, Նրանց խայտառակ մանկունքն է, որ՝ **Մննուն եղուկքն ի յիս կուտին** (կուտակեցին-Ս. Մ.): Թող տեսնեն իր զավակները նախկին փառքը և վերջին նախատիքը: Հերոսուհին ներկայացնում է նաև իրեն պատճառված մյուս կորուստները: Մեծ են դրանք, և ահռելի են վնասները, որոնք տիեզերական չափերի են հասնում, դառնում ճաշակավոր չափազանցություններ.

**Յերկնից յերկիր գիս իջուցին.
Խորք անդնդոց գիս ծածկեցին** (Էջ 96):

Թուրքական տմարդությունը և թուրանական յաթաղանն արել են իրենց ավերիչ ու արյունոտ գործը¹: Չրկանքների հետ կորցրել է նախկին հզոր բանակները, թագավորներին, ազատներին, ռաբունապետերին, տաճարի բազմաքանակ դպիրներին ու ընթերցողներին: Այլևս չկան մեծաքանակ զարդեղենը, թանկարժեք քարերը, ընտիր կտորեղենը, հոտավետ խունկերը և այլն: Խորհրդանիշեր են սրանք, որ վկայում են արքայուհու շքեղ ու ապահով նախկին կյանքի մասին: Հետաքրքիր ձևով իր վշտին մասնակից է դարձնում և իր ցավագին խոսքերը լսողներին: Թող գիշեր ու ցերեկ վայ տան ու իր ողբալի անձի շուրջը պտտվեն: Թող առնեն իրեն և «ածեն» նախկին տեսանողների ու մարգարեների խմբի մեջ, մարդիկ, որոնք հմուտ են «լալոյ բանին» և սգից երբեք չազատվեցին: Նրանք կկարողանան պատշաճ կերպով ողբալ «Չահեղ կորուստն իմոյ զարմին»: Թող իր աչքերն էլ աղբյուր դառնան արտասուլքի, ողբան իր ցավալի ճանապարհների համար, ավաղական խոսքեր ասեն Երուսաղեմի (հին քաղաքի) հասցեին, թե «Ընդէ՞ր այդպես եղեր ստորին Նման խղոց մրգապահին» (Էջ 98): Ակամա հիշում է և Երեմիայի անունը, որ ցավել է հայրենի քաղաքի կործանման առիթով²: Դա ևս հայ հեղինակների համար օրինակ է

1 Հ. Ժամկոչյան և Ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն, Ե., ԵՊՀ հր., 1975, էջ 581-595:

2 Երեմիայի Ողբերը. Բ և Գ: Միջնադարում հայերիս հայտնի չէ Եզիպտոսում ողբի ժանրի տարածվածության հանգամանքի մասին: Այն մենք ընդունել ենք Աստվածաշնչի միջոցով, թեև մեզանում ևս ժողովրդական կյանքում և կենցաղում ողբի ժանրը տարածված է եղել նախաքրիստոնեական վաղ ժամանակներից: Տե՛ս նաև Հին Արևելքի պոեզիա, Ե., ԵՊՀ հր., 1982, 33-36, 495:

հայրենասիրության: Իր զարմի ահեղ կորուստը տեղ չի թողել սգից ազատվելու, և իր աչքերի արտասուքն աղբյուրի է վերածվել: Իր ճանապարհները ողբով են լցվել, և ինքը վայ է տալիս երեց Արշակունիների, կրտսեր Բագրատունիների, Հայոց մեծ Սյունի, Արծրունի, Մամիկոնյան տոհմերի, Աղվանք, Շիրակ, Վանանդ, Տարոն, Ծոփք աշխարհների համար: Ողբը սաստկության մի կոր աստիճան է ձեռք բերում, հասնում կուլմինացիոն կետի.

Վայիւք քանի՛ քեզ հանդիպին,
Մինչ եզր և հատ չկայ քո չարին....(99)

Այո՛, ցավե՛լ, ցավե՛լ, նրանց կորուստի համար, բայց չարիքին սահման չկա: Եվ ի վերջո, կանգ է առնում: Հավաքում է կենսական ավիշները և ուժը, ամենամեն բան գումարում է իրար և փորձում է փոխել եղած ծանրագույն վիճակը: Թող իր համար հավաքված և ողբացող դուստրերը՝

**Պատուեալ գլխովքդ մեր նախկին.
Թողո՛ւմք զողբանքս ցաւագին,
Առնե՛մք աւարտ լալեաց բանին,
Յուսահատիլ չէ պարտ բնաւին
Մեզ ի յուսոյ Անմահ Բանին....(Էջ 100):**

Կատարում է գաղափարական կարևորագույն քայլը: Հարկ է.

**Նոր¹ նորոգումս մեզ կրկին,
Որ բնաւ չիշեմք գիառսն առաջին.
Կանգնէ զաթոռ թագաւորին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունց ըստ իւր կարգին
Ուղղէ զգահոյս տիրականին,
Նոր զարդարէ փառօքն հին
Եւս առաւել քան զոր էին.
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.**

«Վերջինս է մեծ, քան զառաջին» (Էջ 100-101):

Այսպիսի խրոխտ, համարձակ, իր ժամանակի համար խիստ արդիական, բայց անսպասելի հոգեկան պոռթկումով Օրբեյանը ցույց է տալիս իր՝ խիզախ հայրենասերի քաղաքական երազանքը: Դա միայն երազանք չէ, այլ միաժամանակ վճռական քայլ դեպի ազատություն, դեպի նոր կյանք, ուր օտարի բռնությունը և հալածանքը տեղ չունի: Իհարկե, հայրենասիրական զգացմունքները, 5-րդ դարի հեղինակներից սկսած, արծարծվում են մեր պատմիչների և հետագա ժամանակագիրների ու բանաստեղծների երկերում: Բայց 13-րդ դարի վերջում հայոց պետականության վերականգնման ձգտումը այդ բարդ քաղաքական պայմաններում կարևոր նորություն է: «Այս արդեն մի կոր ու մեծ, պարզ ու որոշ զգացում է մեր հայրենասիրական երգի մեջ արծարված գաղափարի՝ սիրով կապվել բուն հայկական երկրի հետ, և կլինի «նորոգումը»²: Ողբն ավարտվում է լավատեսական տրամադրությամբ³: Իր Պատմության մեջ ևս պատմիչ-բանաստեղծը երևան է բերում բանաստեղծական իր ձիրքերը⁴: Պ.

1 Հավանաբար **Նոր** և ոչ թե **Նա**:

2 **Աբեդյան Մ.**, Երկեր, հ. Դ, էջ 270:

3 Տե՛ս **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. Ա. Դյուլխանյանի), էջ 8: Նյութի վերլուծությունը տե՛ս նաև **Աբեդյան Մ.**, Երկեր, հ. Դ, էջ 264-271:

4 **Գրիգորյան Գ.**, Սյունիքը Օրբեյանների օրոք (13-15-րդ դդ.), Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1981, էջ 25-27:

Խաչատրյանն իրավացիորեն նկատում է, որ եթե որոշ ողբերգերում զգացվում է ծայնի սաստկություն, տագնապալի շարժում, անհանգստություն, ողբագրի՝ ականջին հասնող ճիչեր, ապա այս դեպքում «հերոսի փոխարեն հենց սկզբից ազդու կանչով հեղինակն ինքն է սկսում պատումը»¹: Դա Ստեփաննոսի Ողբի գեղարվեստական յուրահատկություններից մեկն է: Այն ավարտվում է ընդգծված լուսավոր երանգով՝ հայրենիքի շինության համոզմունքով: Համախմբման ու միասնության նման քարոզը հզոր գեներ է բոլոր ժամանակների համար: Աստվածային նախախնամության և օգնության հանգամանքը բանաստեղծը չի բացառում, այլ համոզված է, որ դա ի վերուստ կտրվի: Օրբեյաններին և Պռոշյաններին թեև չհաջողվեց հայոց թագավորության վերականգնումը, բայց և նրանք հայ կյանքը փրկեցին հավիտենական կորստից²:

Ողբին կցված է բանաստեղծի չափածո Հիշատակարանը, որը դարձել է նախորդ մասի տրամաբանական ու գաղափարական շարունակությունը: Այն ակրոստիքոս է և գլխագրերը հողում են «Ս-Տ-Ե-Փ-Ա-Ն-Ո-Ս» (մեկ ն-ով): Վերնագրված է «Յիշատակ բանի ըստ անուն ոգողին»³: Բանաստեղծն իր երկը նվիրում է Աստծո Տանը՝ Կաթողիկե Եկեղեցուն, որը նրա համոզմամբ երկինք է երկրի վրա՝ /Լուսապսակ հարսն ի յերկրէ...

Որպես պոետ դիմում է խոսքի արվեստին, հոմերոսյան չափերին.

Տողեալ տաղիւ չափ յանկական՝
Ըստ արիեստին հոմերական
Ստեփաննոսի թշուառական,
Ոգւով մեռեալ և անպիտան.
...Շնորհաց քեալ յարփիական,
Գործով լցեալ եղերական (Էջ 102):

Հեղինակը հետևում է միջնադարյան մյուս բանաստեղծների օրինակին, որոնք նվաստացնում են սեփական անձը: Տեղեկություններ է հաղորդում իր մասին ու նշում, որ.

Փութով մեծաւ զմեզ հարկեալ,
Ի յայս հանդէս բանից մղեալ,
Բաբունապետս հոգւով լցեալ
Անյաղթ հռետս շնորհօք ծաղկեալ
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ
Յազգաց բազմաց գովաբանեալ,

Որ Խաչատուրս է յորջորջեալ

ՅԱրարատեան տանէն եկեալ (Էջ 103) /ընդգ. Մերն Է-Ս. Մ./:

Բանաստեղծ-պատմիչը խոստովանում է, որ **անհաղթ հռետոր Խաչատուրի** ցանկությամբ և հորդորով է հորինել իր երկը: Նա այստեղ ևս չի մոռանում արտահայտել և իր ցավն ու մտահոգությունը իր նվազող ազգի համար, ուստի տխրագին խնդրում է Տիրոջն ու հայցում նրանից շենություն աշխարհիս.

Նուաղեալ ազգիս, որ սպառեալ է,

¹ **Խաչատրյան Պ.**, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԵ դդ.), էջ12:

² Տե՛ս **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. Ա. Դյուլխանյանի), էջ 101-105:

³ Տե՛ս **Ն. Աղոնց**, Քննական Տեղեկագիր պրոֆ. Ն. Աղոնցի՝ ի մասին Տ. Գ. Յովսեփեանի «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլածորի բարձր դպրոցը» ուսումնասիրության /գրախոսություն/, **Գ. Յովսեփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլեաս, 1969, էջ 446:

Նորոգությունն փութով խնդրե,
խաղաղություն խորին շնորհե,
Անշարժ յաւետ, որ չսասանէ... (Էջ 104):

Խաչակիրների նոր արշավանքներով և առավելապես հույն և լատին եկեղեցիների հարուցած դավանաբանական նոր վեճերով ուղեկցված¹, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ Հեթում 2-րդը ձեռնադրում է նոր կաթողիկոս սկզբում տեր Ստեփանին, իսկ նրա գերվելուց հետո Գրիգոր Անավարզեցուն (1293-1307): Վերջինս, Ստ. Օրբելյան պատմիչի վկայությամբ, գահակալության 3-րդ տարվանից սկսած, հունական եկեղեցու շատ ծեսեր գաղտնի ներմուծուծում է մեր եկեղեցի, մինչդեռ հայաստանյայց հոգևորականությունը դա չի ընդունում, և թուղթ է հղում կաթողիկոսին, որով մերուծում է նման նորամուծությունները: Այդ թուղթն ստորագրում են Էլիկում, Լիպարիտ, Պապաք և Էաջ իշխանները, Եսայի Նչեցի վարդապետն՝ իր աշակերտներով և Արևելյան Հայաստանի բազում մեծապատիվ եպիսկոպոսներ, այդ թվում և Ստեփանոսը: Նրանում գտնում ենք նաև Խաչատուր Կեչառեցու անունը. «Ես՝ Խաչատուր վարդապետ Կեչառեցի, վկայ եմ այսմ դաւանութեան»²: Նշանավոր վարդապետ և հռետոր Խաչատուր Կեչառեցին օժտված բանաստեղծ է³, ինչպես նրա համախոհ Ստ. Օրբելյան պատմիչը, որ հետևել է ընկերոջ օրինակին՝ նրա իսկ հորդորով: Նրանց և իրենց ժամանակակիցների չափածոն հասարակաբան է, քանզի նրանք գործածում են գրաբարից տարբեր մի նոր լեզու: Դա կարելի է համարել և ռամկական: Պատճառն այն է, որ այս շրջանում մեզանում գրաբարը դուրս է գալիս շրջանառությունից⁴: Դա պարզ երևում է բանաստեղծների՝ արդեն բերված ստեղծագործությունների լեզվագործության մեջ: Իսկ ժամանակի չափածոն նոր ստեղծագործական բարդ որոնումների մեջ է հայտնվում⁵: Դեռևս մշակված չէ հանգերի համակարգը, և մեծ է միահանգության, իսկ հաճախ բռնահանգի հոգևեցուցիչ ազդեցությունը: Այս և այլ գործոններ պատճառ են դառնում բանաստեղծական խոսքի որոշակի թուլացման կամ ավելի շուտ՝ այդպիսի տպավորության: Դա նկատելի է ինչպես երկու տաղանդավոր արվեստագետների չափածո երկերում, այնպես էլ Ֆրիկի ու այլոց ստեղծագործության մեջ: Դրա հետ մեկտեղ այս երկուսը նաև հայտնի հռետորներ են: Նրանք նաև երկու նշանավոր դպրոցների՝ **Սյունյաց, այն է Տաթևի, և Արարատյան, այն է՝ Կեչառիսի**, ուսուցապետներ են, սիրված վարդապետներ: Խաչատուր Կեչառեցին բանաստեղծ է, ուսուցչապետ Կեչառիսի՝ Գր. Մագիստրոսի ձեռքով ստեղծված ճեմարանում⁶: Նա այս գրական-գիտողաց դպրոցի վերջին խոշոր դեմքն է 14-րդ դ. սկզբում: Ուրեմն դարաշրջանի բանաստեղծների գործածած լեզուն է գլխավոր պատճառը, որ նրանց ստեղ-

1 Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 471-472: Տե՛ս նաև՝ **Միջին դարերի պատմություն (խմբ. Սկազկինի)**, հ. 1-ին, Ե., ԵՊՀ հր., 1975, էջ 717-720:

2 Տե՛ս **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. **Ա. Դոլուխանյանի**), էջ 6:

3 **Խաչ. Կեչառեցին** ապաշխարության, վարդի ու սոխակի, ինչպես և Ալեքսանդր Մեծի թեմայով մի շարք տաղերի, ողբերի, կաֆաների հեղինակ է: Տե՛ս **Խաչ. Կեչառեցի**, Տաղեր (աշխ. **Ա. Դոլուխանյանի**), էջ 5-16:

4 Տե՛ս **Զահուկյան Գ.**, Չրույցներ հայոց լեզվի մասին, Ե., Կակից հր., 1992, էջ 97-119:

5 Տե՛ս **Շանթ Լ.**, Ընդհանուր ակնարկ մը հայ բանահիւսութեան մասին, հ. 9, Պէրյուր, 1946, էջ 97-98, 270-280: Մ. Աբեղյանը գտնում է, որ Ստեփանոսի «Ողբ ի Ս. Կաթողիկէն» պակաս ինքնուրույն է՝ տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 270:

6 Տե՛ս **Զուհարյան Թ.**, Հայ գրականության մեթոդիկա, Ե., 1980, էջ 20-22:

ծագործությունը Մ. Աբեղյանը թույլ է անվանում չնայած պնդում է, թե դիմառնական ոճն օրինակ Ստեփաննոսը Ն. Շնորհալուց է վերցրել: Նրանք, սակայն, մեզ մատուցում են կյանքի հուզական շնչով ու պատկերներով բավականին հագեցած ստեղծագործություններ՝ իրավիճակին ներհատուկ պատմափիլիսոփայական խորքով ու նոր մտածողությամբ:

Գաղափարական ու կառուցվածքային պլանում բերված ստեղծագործություններում անցյալը և ներկան հանդես են գալիս իբրև կատարյալի և անկատարի, գոյացումի և քայքայման, համաձայնության և գժտության հակադրություններ (շարքը կարելի է շարունակել): Անցյալն արժևորվում է կարգաբանված աշխարհի պատկերով, ուր Արամյանները՝ որպես տիրակալներ, ստեղծել են մի բարեկեցիկ, արժանապատիվ, հերոսական աշխարհ՝ ունենալով նաև վերին ուժերի հովանավորությունը: Իսկ ներկան մեղքի պատճառով հանդես է գալիս անկման ու աղետների, տիեզերակարգի խարխլման ու քայքայումի վայրընթացով, ուր իշխում են դիվական ուժերը: Հեղինակներն ահա՛ դնում են ներդաշնակության ու կարգաբանված տիեզերքի՝ այն է բարեկերտ հայրենիքի վերաշինման խնդիրը՝ թագավորության տեսքով:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հեղինակների ցատումը չարիքի ու այն սերմանող թշնամու դեմ է,
2. Լեզվական առումով անցում է կատարված միջին հայրենի գործածությանը,
3. Հանգի օգտագործումը հստակեցված է և կայունացած,
4. Հեղինակների նպատակն է թագավորության և քահանայապետության վերականգնումը:

SARKIS MKHITARIAN - STEPHANOS ORBELYAN AND KHACHATUR KECHARETSI AS FRIENDS AND ADHERENTS - As a result of the ideological cooperation of the major cultural figures, «The Lamentation of St. Katoghike» was born, which is composed with specific genre peculiarities and has been influenced by philanthropic influence of the lamentations of Moses of Khoren and Nerses Gracious. The Katoghike / a church in Etchmiadzin/ is represented as The Armenian princess of Hayk's dynasty who, completely naked, has called his sons to tell her of her mourning and misery. The cause of the painful decline is the Turkish bloody diarrhea. She hoped that her children will change everything, save her and restore their ruined kingdom.

Key words: Stephanos Orbelyan, Khachatur Kecharatsi, lamentation, historian, abuna.

САРГИС МХИТАРЯН - СТЕФАНОС ОРБЕЛЯН И ХАЧАТУР КЕЧАРЕЦИ КАК ДРУЗЬЯ И ЕДИНОМЫШЛЕННИКИ - В результате идеологического сотрудничества крупных деятелей культуры родилась «Причитание Святой Католики» с типичной жанровыми особенностями, которая носит воздействия причитании М.Хоренаци и Н. Шнорали. Католике /церковь в Эчмиадзине/ представлена как голая и униженная армянская принцесса, которая вызывает своих сыновей и рассказывает о своей горе и страдании. Причина этого- турецкая кровавая ига. Ее сыновья изменят эту позорную ситуацию, будут заботиться о ней и восстановят разрушенное королевство.

Ключевое слово: Степанос Орбелян, Хачатур Кечареци, причитание, историк.